

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/38**

ք. Երևան

«11» 04 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս Աշոտ Կիրակոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Վարդանյանի, որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Արարատ մարզի Տափերական համայնքը սնուցող խմելու մայր ջրատարի կառուցում /d=150 մմ, 3-4 կմ երկարությամբ/» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է 150 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջնոցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և

ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37,992,780 (երեսուկոթ միլիոն ինը հարյուր ինսուներկու հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 6,332,130 (վեց միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.2 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.3 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ-ՄԳ/ԼԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է՝

<sup>1</sup> Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափարարիկներով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափարարիկի գինն է:

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.  
ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է

#### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>2</sup>:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

#### 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և

<sup>2</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային

կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՐՈՑԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԵՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,

Կ.Ուլնեցու 31


ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900018001231

Կենտրոնական զանապետարան

Գործադիր տնօրեն

Աշոտ Կիրակոսյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ

Հասցեն՝ Արարատի մարզ գ.Ավշար

Արարատ-Վեդի ա/ճ աջ մայր2/2

ՀՎՀՀ՝ 04102505

Հ/Հ՝ 205002202385

Բանկ՝ «Ինտելոբանկ» ՓԲԸ «Կորյուն» մ/ճ

Տնօրեն

Ստեփան Վարդանյան

  
/ստորագրություն/  
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ •**  
**«ՀՀ Արարատ մարզի Տափերական համայնքը սնուցող խմելու մայր ջրատարի կառուցում /d=150 մմ, 3-4 կմ երկարությամբ/»**  
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| Հ/հ | Աշխատանքների անվանումը                                              | Չ/մ               | քանակը  | միավ. Գինը | Ընդ արժեքը |
|-----|---------------------------------------------------------------------|-------------------|---------|------------|------------|
| 1   | 2                                                                   | 3                 | 4       | 5          | 6          |
|     | <b>ջրագիծ դիտահոր 1-ից 2</b>                                        |                   |         |            |            |
| 1   | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 1036,45 | 0,53       | 547,00     |
| 2   | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 1036,45 | 0,65       | 677,35     |
| 3   | Բնահողի լրամշակում ծեցքով խրամուղում                                | մ3                | 138,19  | 3,20       | 441,96     |
| 4   | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ                            | մ <sup>3</sup>    | 207,29  | 6,45       | 1338,05    |
| 5   | Պլիլեթիլենային խողովակ խմելու ջրի համար, d=160x9,5մմ, 10,0 մթն.մեշ. | մ                 | 2303,2  | 7,86       | 18103,28   |
| 6   | Ավազե շերտի իրականացում 30սմ հաստությամբ                            | մ <sup>3</sup>    | 368,40  | 6,45       | 2378,00    |
| 7   | Բնահողի հետլիցք քուլղողներով                                        | մ3                | 1589,22 | 0,07       | 117,39     |
| 8   | Անհարբույրյունների ուղղում մեխանիզմով                               | 100մ2             | 13,82   | 20,45      | 282,67     |
| 9   | Պլիլեթիլենային անկյունակի մոնտաժում d=160մմ 90                      | հատ               | 1,00    | 16,39      | 16,39      |
| 10  | Պլիլեթիլենային անկյունակի մոնտաժում d=160մմ 45                      | հատ               | 1,00    | 24,39      | 24,39      |
| 11  | Ջրագծի ախտահանում                                                   | զմ                | 2303,2  | 0,1        | 236,86     |
| 12  | Համակարգի հիդրավլիկ փորձարկում                                      | մ                 | 2303,22 | 0,09       | 197,77     |
|     | <b>Անվալտբետոնե ծածկույթ</b>                                        |                   |         |            |            |
| 1   | Անվալտբետոնե ծածկույթի քանդում                                      | 100մ3             | 0,006   | 464,46     | 2,55       |
| 2   | Քանդված ասֆալտբետոնի քարծում                                        | տմ                | 1,28    | 0,45       | 0,58       |
| 3   | Ցեղափոխում 3 կմ                                                     | տմ                | 1,28    | 1,17       | 1,50       |
| 4   | Խմային էլիմնահատուկի իրականացում 8սմ հաստությամբ                    | մ3                | 0,44    | 8,87       | 3,90       |
| 5   | Անվալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5 սմ հաստությամբ            | 100մ <sup>2</sup> | 0,06    | 688,80     | 37,88      |
|     | <b>ջրագիծ դիտահոր 2-3-4-11</b>                                      |                   |         |            |            |
| 1   | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 449,10  | 0,53       | 237,02     |
| 2   | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 449,10  | 0,65       | 293,50     |
| 3   | Բնահողի լրամշակում ծեցքով խրամուղում                                | մ3                | 59,88   | 3,20       | 191,51     |
| 4   | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ                            | մ <sup>3</sup>    | 89,82   | 6,45       | 579,78     |
| 5   | Պլիլեթիլենային խողովակ խմելու ջրի համար, d=160x9,5մմ, 10,0 մթն.մեշ. | մ                 | 998     | 7,86       | 7844,27    |
| 6   | Ավազե շերտի իրականացում 30սմ հաստությամբ                            | մ <sup>3</sup>    | 159,58  | 6,45       | 1030,11    |
| 7   | Բնահողի հետլիցք քուլղողներով                                        | մ3                | 688,62  | 0,07       | 50,67      |
| 8   | Անհարբույրյունների ուղղում մեխանիզմով                               | 100մ2             | 5,99    | 20,45      | 122,48     |
| 9   | Պլիլեթիլենային անկյունակի մոնտաժում d=160մմ 90                      | հատ               | 1,00    | 16,39      | 16,39      |
| 10  | Ջրագծի ախտահանում                                                   | զմ                | 998,0   | 0,1        | 102,63     |
| 11  | Ախացում գործող ջրագծին                                              | 1կետ              | 1,00    | 3,86       | 3,86       |
| 12  | Համակարգի հիդրավլիկ փորձարկում                                      | մ                 | 998     | 0,09       | 85,70      |
|     | <b>ջրագիծ դիտահոր 4-ից դիտահոր 5</b>                                |                   |         |            |            |
| 1   | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 155,25  | 0,53       | 81,94      |
| 2   | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                             | մ3                | 155,25  | 0,65       | 101,46     |

|                                |                                                                       |                |        |        |         |
|--------------------------------|-----------------------------------------------------------------------|----------------|--------|--------|---------|
| 3                              | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                  | մ3             | 20,70  | 3,20   | 66,20   |
| 4                              | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ                              | մ <sup>3</sup> | 31,05  | 6,45   | 200,43  |
| 5                              | Պոլիէթիլենային խողովակ խմելու ջրի համար, d=160x9,5մմ, 10,0 մթն.ճնշ.   | մ              | 345    | 7,86   | 2711,70 |
| 6                              | Ավազե շերտի իրականացում 30սմ հաստությամբ                              | մ <sup>3</sup> | 55,17  | 8,45   | 358,10  |
| 7                              | Բնահողի հետվիցք բուլդոզերով                                           | մ3             | 238,05 | 0,07   | 17,58   |
| 8                              | Ամհարթությունների ուղղում մեխանիզմով                                  | 100մ2          | 2,07   | 20,45  | 42,34   |
| 9                              | Պոլիէթիլենային անկյունակի մոնտաժում d=160մմ 90°                       | հատ            | 2,00   | 16,39  | 32,79   |
| 10                             | Պոլիէթիլենային անկյունակի մոնտաժում d=160մմ 45°                       | հատ            | 2,00   | 24,39  | 48,78   |
| 11                             | Ջրազնի ավտոմատում                                                     | զմ             | 345,0  | 0,1    | 35,48   |
| 12                             | Համակարգի հիդրավլիկ փորձարկում                                        | մ              | 345    | 0,09   | 29,62   |
| ջրազնի դիտահոր 5-ից դիտահոր 10 |                                                                       |                |        |        |         |
| 1                              | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                               | մ3             | 245,25 | 0,53   | 129,43  |
| 2                              | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                               | մ3             | 245,25 | 0,85   | 160,28  |
| 3                              | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                  | մ3             | 32,70  | 3,20   | 104,58  |
| 4                              | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ                              | մ <sup>3</sup> | 49,05  | 6,45   | 316,62  |
| 5                              | Պոլիէթիլենային խողովակ խմելու ջրի համար, d=125x7,4մմ, 10,0 մթն.ճնշ.   | մ              | 545    | 4,95   | 2699,74 |
| 6                              | Խամուշ-անցումի մոնտաժում 3/4"x75մմ                                    | հատ            | 31,00  | 3,62   | 112,35  |
| 7                              | մետաղական անցումների տեղադրում d=20մմ L=30մմ /տոմ                     | հատ            | 31,00  | 2,44   | 75,61   |
| 8                              | Ավազե շերտի իրականացում 30սմ հաստությամբ                              | մ <sup>3</sup> | 87,15  | 6,45   | 562,53  |
| 9                              | Բնահողի հետվիցք բուլդոզերով                                           | մ3             | 376,05 | 0,07   | 27,78   |
| 10                             | Ամհարթությունների ուղղում մեխանիզմով                                  | 100մ2          | 3,27   | 20,45  | 66,89   |
| 11                             | Ջրազնի ավտոմատում                                                     | զմ             | 545,0  | 0,1    | 56,05   |
| 12                             | Համակարգի հիդրավլիկ փորձարկում                                        | մ              | 545    | 0,09   | 46,80   |
| Դիտահոր 1                      |                                                                       |                |        |        |         |
| 1                              | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                               | մ3             | 12,27  | 0,53   | 6,47    |
| 2                              | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                  | մ3             | 0,49   | 3,20   | 1,57    |
| 3                              | Բնահողի մախավաորաստական շերտի կտրուցում 10 սմ                         | մ <sup>3</sup> | 0,35   | 42,88  | 14,84   |
| 4                              | Բնահողի նախաշերտի կտրուցում B - 12,5 դասի բետոնից 15սմ                | մ <sup>3</sup> | 0,47   | 47,67  | 22,45   |
| 5                              | Էքսկավատորի դիտահորի տեղադրում 1500x1000մմ ն/բ կափարիչով քուջի մոտցով | կ-տ            | 1,00   | 218,04 | 218,04  |
| 6                              | Դիտահորի ջրամեկուսացում բիտումնե մանիկով                              | մ <sup>2</sup> | 17,59  | 0,56   | 9,84    |
| 7                              | Գրունտի նալիցք ձեռքով                                                 | մ <sup>3</sup> | 5,91   | 1,04   | 6,12    |
| 8                              | Սողեակային փականի տեղադրում d=160մմ                                   | հատ            | 1,00   | 94,64  | 94,64   |
| 9                              | Պոլիէթիլենային կցաշերտի տեղադրում d=160մմ                             | հատ            | 2,00   | 18,73  | 37,47   |
| 10                             | Մետաղական կցաշերտ d=160մմ                                             | հատ            | 4,00   | 13,64  | 54,58   |
| Դիտահոր 2                      |                                                                       |                |        |        |         |
| 1                              | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                               | մ3             | 12,27  | 0,53   | 6,47    |
| 2                              | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                  | մ3             | 0,49   | 3,20   | 1,57    |
| 3                              | Բնահողի մախավաորաստական շերտի կտրուցում 10 սմ                         | մ <sup>3</sup> | 0,35   | 42,88  | 14,84   |
| 4                              | Բնահողի նախաշերտի կտրուցում B - 12,5 դասի բետոնից 15սմ                | մ <sup>3</sup> | 0,47   | 47,67  | 22,45   |
| 5                              | Էքսկավատորի դիտահորի տեղադրում 1500x1000մմ ն/բ կափարիչով քուջի մոտցով | կ-տ            | 1,00   | 218,04 | 218,04  |
| 6                              | Դիտահորի ջրամեկուսացում բիտումնե մանիկով                              | մ <sup>2</sup> | 17,59  | 0,56   | 9,84    |
| 7                              | Գրունտի նալիցք ձեռքով                                                 | մ <sup>3</sup> | 5,91   | 1,04   | 6,12    |
| 8                              | Պոլիէթիլենային նախաշերտի մոնտաժում d=160*160*160մմ                    | հատ            | 1,00   | 28,85  | 28,85   |
| 9                              | Պոլիէթիլենային փախուցիչայլի մոնտաժում d=160-80մմ                      | հատ            | 1,00   | 10,43  | 10,43   |

|                   |                                                                        |                |       |        |        |
|-------------------|------------------------------------------------------------------------|----------------|-------|--------|--------|
| 10                | Սողակալային փակակնի տեղադրում d=80մմ                                   | հատ            | 1,00  | 38,99  | 38,99  |
| 11                | Պլիեթիլենային կցաշուրթի տեղադրում d=80մմ                               | հատ            | 2,00  | 7,00   | 13,99  |
| 12                | Մետաղական կցաշուրթ d=80մմ                                              | հատ            | 4,00  | 3,72   | 14,89  |
| Դիտանիք 3         |                                                                        |                |       |        |        |
| 1                 | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                                | մ3             | 12,27 | 0,53   | 6,47   |
| 2                 | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                   | մ3             | 0,49  | 3,20   | 1,57   |
| 3                 | Բևտոնե նախապատրաստական շերտի կառուցում 10 սմ                           | մ <sup>3</sup> | 0,35  | 42,88  | 14,84  |
| 4                 | Բևտոնե նախաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 15սմ                  | մ <sup>3</sup> | 0,47  | 47,67  | 22,45  |
| 5                 | Երկաթբետոնե ղիտանիքի տեղադրում 1500x1000մմ ե/ք կափարիչով թուջե մտուցով | կ-տ            | 1,00  | 218,04 | 218,04 |
| 6                 | Դիտանիքի ջրամեկուսացում բիտումե մածիկով                                | մ <sup>2</sup> | 17,59 | 0,56   | 9,84   |
| 7                 | Գրունտի ետլիցք ձեռքով                                                  | մ <sup>3</sup> | 5,91  | 1,04   | 6,12   |
| 8                 | Պլիեթիլենային հոսքաշիջի մոնտաժում d=160*160*160մմ                      | հատ            | 1,00  | 28,85  | 28,85  |
| 9                 | Պլիեթիլենային փոխակերպիչի մոնտաժում d=160-80մմ                         | հատ            | 1,00  | 10,43  | 10,43  |
| 10                | Սողակալային փակակնի տեղադրում d=80մմ                                   | հատ            | 1,00  | 38,99  | 38,99  |
| 11                | Պլիեթիլենային կցաշուրթի տեղադրում d=80մմ                               | հատ            | 2,00  | 7,00   | 13,99  |
| 12                | Մետաղական կցաշուրթ d=80մմ                                              | հատ            | 4,00  | 3,72   | 14,89  |
| Դիտանիք 4         |                                                                        |                |       |        |        |
| 1                 | 2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով                                | մ3             | 12,27 | 0,53   | 6,47   |
| 2                 | Բնահողի լրամշակում ձեռքով խրամուղում                                   | մ3             | 0,49  | 3,20   | 1,57   |
| 3                 | Բևտոնե նախապատրաստական շերտի կառուցում 10 սմ                           | մ <sup>3</sup> | 0,35  | 42,88  | 14,84  |
| 4                 | Բևտոնե նախաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 15սմ                  | մ <sup>3</sup> | 0,47  | 47,67  | 22,45  |
| 5                 | Երկաթբետոնե ղիտանիքի տեղադրում 1500x1000մմ ե/ք կափարիչով թուջե մտուցով | կ-տ            | 1,00  | 218,04 | 218,04 |
| 6                 | Դիտանիքի ջրամեկուսացում բիտումե մածիկով                                | մ <sup>2</sup> | 17,59 | 0,56   | 9,84   |
